Փրկե՛ք արվեստը. հայցադիմում պետական կառավարություններին

Բրյուսել, ապրիլի 6, 2020 թ

International network for contemporary performing arts

Հաստատվել է

European Dancehouse Network

in-situ

CIRCO STRADA
European Network Circus and Street ArtS

ETC EUROPEAN THEATRE CONVENTION

EUROPEAN FESTIVALS ASSOCIATION

կողմից

Այս հայցադիմումը գրվել է IETM- ի կողմից և ստորագրվել է Circostrada- ի, Եվրոպական թատրոնի կոնվենցիայի (ETC), IN SITU- ի, European Dancehouse Network-ի (EDN) և Եվրոպական փառատոնների ասոցիացիայի (EFA) կողմից:

Կորոնա-համաճարակի բռնկումից ի վեր, համաշխարհային բնակչության հսկայական մասը՝ տարբեր ծագումով, տարիքի, արժեքների և սոցիալական պայմանների մարդիկ, հայտնվեցին կանոնավոր կյանքի կտրուկ դադարեցման, ուղիղ հանդիպումների և շփման սահմանափակման պայմաններում: Որոշ մարդիկ անսպասելի ֆինանսական դժվարություններ են ունենում, մյուսները տառապում են առողջության հետ կապված խնդիրներից և անհանգստություններից: Այս բոլորը, զուգորդվելով ապագայի վերաբերյալ մեծ անորոշության հետ, ստեղծում են հսկայական սոցիալ-հոգեբանական ճգնաժամ, ինչն անջնջելի հետք կթողնի մեր հասարակությունների վրա:

Ինչպես ցանկացած տարերային իրավիճակում, մարդիկ այսօր էլ դիմում են մշակույթին. գրականություն, երաժշտություն, կինո, լուսանկարչություն, վիրտուալ թանգարաններ, պարային և թատերական ներկայացումներ, որոնք տեղափոխվում են առցանց տիրույթ կամ իրականացվում բացօթյա պայմաններում՝ պահպանելով սոցիալական հեռավորության կանոնները: Արվեստը շարունակում է կրել մարդկանց միավորելու հսկայական ուժ նույնիսկ այն ժամանակներում, երբ ֆիզիկապես միասին լինել հնարավոր չէ: Մշակույթն ամրացնում է մարդկանց բարեկեցությունը, ստեղծագործական լուծումներ հուշում և գոտեպնդում նրանց, ովքեր կորցրել են հույսը: Արվեստն օգնում է իրականությունը հեռանկարային դարձնել, քննադատական պրիզմայով նայել դրան և պատկերացնել ավելի լավ ապագա, թեկուզ թվացյալ անհաղթահարելի անորոշության պայմաններում: Մենք գտնվում ենք նոր իրականության շեմին, և մենք միայն ինքներս կարող ենք միմյանց փոխանցել անհատական ուժ և հավաքական ռեսուրսներ՝ ճգնաժամը վերածելու պատուհանի՝ դեպի ավելի լավ ապագա: Մշակույթն, անկասկած, լուծման մի մասն է:

Միևնույն ժամանակ, մշակութային ոլորտը, մասնավորապես՝ կատարողական արվեստը, առաջինն է տուժել COVID-19-ի բռնկումը կանխելու պետական միջոցառումներից: Ավելին, այն, ամենայն հավանականությամբ, կլինի վերջիններից, որ կկարողանա բարեհաջող կերպով վերսկսել բնականոն գործունեությունը, երբ կառավարությունները կսկսեն մեղմել սահմանափակումները: Այսպիսով, ներկայիս ճգնաժամը, որը դեռևս միայն մի քանի շաբաթ առաջ է հաստատվել, արդեն իսկ միլիոնավոր անկախ արվեստագետների և փոքր ընկերությունների դրել է էքզիստենցիալ սպառնալիքի տակ:

Կորոնա-ճգնաժամը վնասակար ազդեցություն ունեցավ կատարողական արվեստի ոլորտի՝ արդեն իսկ ծայրահեղ խոցելի էկոհամակարգի վրա, որը բնութագրվում է բարձր աշխատունակությամբ ինքնազբաղված մասնագետների մեծ թվով, կիսաժամկետ պայմանագրերով, ճկուն աշխատելաոճով, զուգորդված սոցիալական նպաստների սահմանափակ մատչելիությամբ: Ավելին, շատ արվեստի կազմակերպությունների, փառատոների և մասնագետների համար ճգնաժամը ընկավ տարվա այն կարևոր ժամանակահատվածում, երբ նախատեսվում էր ձեռք բերել իրենց տարեկան եկամտի զգալի մասը:

Համաշխարհային ստեղծարար համայնքը ցուցաբերեց հսկայական համերաշխություն և ստեղծագործականություն՝ առերեսվելով նոր իրականության հետ: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ պետական կառավարություններին վերապահված է փրկել մշակութային հատվածը, որը կենսունակ սոցիալական ռեսուրս է հանդիսանում, կրում է հսկայական ներքին արժեք և նպաստում տնտեսությանը:

Հետևաբար, մենք կոչ ենք անում ազգային կառավարություններին՝ ձեռնարկել հետևյալ միջոցառումները՝ հաշվի առնելով ներկայիս պահի հրատապությունը և նպատակ ունենալով ոլորտի երկարաժամկետ կենսունակությունը.

- Արվեստագետներին և մշակույթի ոլորտի մասնագետներին հնարավորություն տալ՝ օգտվել գործազրկության վճարներից և սոցիալական նպաստներից և փոխհատուցել COVID-19 ճգնաժամի հետևանքով պատճառված կորուստները:

- Աջակցեք մշակույթին և արվեստին ԵՄ Coronavirus արձագանքման ներդրումային նախաձեռնության միջոցով:

- Մշակութային ոլորտի համար ստեղծել արտակարգ իրավիճակների ֆոնդեր՝ մշակույթի նախարարությունների և արվեստի խորհուրդների գոյություն ունեցող բյուջեներից դուրս: Նման գործիքները պետք է կազմվեն բյուջետային այլ գծերից, որոնք հատուկ նվիրված են COVID-19 ճգնաժամի հետևանքների մեղմմանը:

- Կիրառել ճկունություն բոլոր առկա ֆինանսավորման սխեմաների վրա՝ թույլ տալով, որ շահառուները որոշեն՝ արդյոք նրանք պետք է հետաձգեն, չեղյալ հայտարարեն կամ վերափոխեն գործողությունները, թե երկարացնեն ֆինանսավորվող ծրագրի ցիկլը:

- 2020-ին և դրանից հետո մշակույթի և արվեստի ոլորտում հավելյալ ներդրումներ անել՝ նպաստելով դրանց վերածնունդին և հետագա կայունությանը:

- Պահպանել միջազգայնացման բյուջեները, քանի որ դրանք շատ կարևոր են տեղական ստեծարար դաշտի կարողությունների զարգացման համար:

- Նախաձեռնել արվեստագետի կարգավիճակի արդի բնույթի վերաբերյալ լայնածավալ քննարկում՝ նպատակ ունենալով ապահովել արվեստագետների կարիերայի կայունությունը, փորձը և գործունեությունը, ինչպես նաև արվեստագետների խոսքի ազատությունը, սոցիալական և ֆինանսական ճանաչումը և անհատական բարեկեցությունը:

- Ուսումնասիրել համընդհանուր հիմնական եկամուտ ներմուծելու հնարավորությունը՝ մարդկանց ապագա ճգնաժամերից և ֆորսմաժորային իրավիճակներից պաշտպանելու համար:

- Միավորել մշակույթը և արվեստը տնտեսական և սոցիալական վերածննդի և ապագա-վերափոխման ռազմավարություններում՝ ճանաչելով նրանց հսկայական արժեքը քաղաքացիների բարեկեցության համար, ինչպես նաև մարդկանց միավորելու նրանց ուժը, նույնիսկ այն ժամանակաշրջանում, երբ հնարավոր չէ ուղիղ հաղորդակցվել:

Մենք պահանջում ենք, որ վերը նշված միջոցները և այլ քայլեր ձեռնարկվեն երկարաժամկետ ռազմավարության ձևավորման ուղղությամբ:

Հայերեն տարբերակն արվել է Շողակաթ Մլքե-Գալստյանի կողմից (ՄԻՀՐ ժամանակակից Պարի Թատրոն)

IETM, International network for contemporary performing arts, is one of the oldest and largest cultural networks, which represents the voice of over 500 performing arts organisations and institutions, including theatres and arts centres, festivals, performing companies, curators and programmers, producers, art councils and associations from about 50 countries. IETM advocates for the value of the arts and culture in a changing world and empowers performing arts professionals through access to international connections, knowledge and a dynamic forum for exchange.
www.ietm.org

For more than 15 years, Circostrada has been working to develop and empower the fields of circus and street arts in Europe and beyond. It supports professionals and cultural stakeholders at large by boosting professional exchanges, collecting data, fostering training, knowledge sharing and promoting innovation in both sectors. With more than 100 members from over 35 countries, Circostrada acts as a bridge between all field players and EU policy makers, relaying their needs and advocating for greater means and more structured cultural policies. Circostrada is coordinated by ARTCENA – French National Centre for Circus Arts, Street Arts and Theatre, and is co-funded by the Creative Europe programme of the European Union and the French Ministry of Culture.
www.circostrada.org

IN SITU is the European platform for artistic creation in public space. Since 2003, it has supported more than 200 artists working outside conventional venues and contributing to the transformation of our territories. IN SITU is an ecosystem connecting a new generation of artists with audiences, programmers, and key-players involved in the economic, political and social realities around Europe. IN SITU develops an ecology of creation based on transnational artistic workshops and laboratories, European and international residencies and collective mentoring for pilot artistic projects. IN SITU also designs tailored consulting and expertise for European cities, online training modules (MOOC) and a Think Tank dedicated to artistic creation in public space.
IN SITU ACT 2016 - 2020 is co-funded by the Creative Europe programme of the European Union.
www.in-situ.info

EDN, European Dancehouse Network, formed in 2004, is an association of more than 36 dance houses connecting across Europe and beyond, with a shared ambition: strengthening professional practice, developing audiences and enhancing public engagement and progressing the network. In pursuit of this mission EDN's purpose is to champion, strengthen and communicate the dance house model as providing the optimum conditions and most effective means necessary for the structural development of dance as contemporary art form, at all levels of engagement. EDN is the dance house network of Europe, where each member subscribes to cooperating, sharing resources, capacity building and intelligence gathering. Confronted with the challenges of the world today we stay for connectedness, identity and empathy building, resilience and the vital impact of the performing arts in society.
www.ednetwork.eu

The European Theatre Convention (ETC) is an artistic platform for creation, innovation and collaboration. As the largest network of public theatres in Europe, the ETC has more than forty European Theatre Members from over twenty countries, reflecting the diversity of Europe's vibrant cultural sector. Founded in 1988, the ETC promotes European theatre as a vital social platform for dialogue, democracy and interaction that responds to, reflects and engages with today's diverse audiences and changing societies. ETC fosters a socially-engaged, inclusive notion of theatre that brings Europe's social, linguistic and cultural heritage to audiences and communities everywhere. Powerful and professional ETC governance ensures that the network will strive and grow taking into consideration latest trends and developments.
www.europeantheatre.eu

The European Festivals Association (EFA) is a community dedicated to the arts, the artists and the audiences. EFA's main role in the permanently developing world of digitisation and globalisation is to connect festival makers so to inform, inspire and enrich the festival landscape. In this perspective, EFA is a festivals' service, knowledge and training provider; the oldest cultural network of European festivals! It was established to bridge the distance between organisations and all kinds of stakeholders and to create connections internationally. All this in function of the enrichment of a festival's own artistic offer and its organisational opportunities. EFA guides the discourse on the value of arts festivals. A sector that is so unique and that shares a myriad of concerns on intellectual, artistic, material and organisational level deserves a strong umbrella organisation that supports local initiatives and gives arts festivals a unified voice.
www.efa-aef.eu